Հավելված N 1
«ՄՕՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/7-ԳԵՆԵՐԱՏՈՐ »* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

# ԴԻՄՈՒՄՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*
## Գնանշման հարցմա մասնակցելու

«Սպեցմաշ» ՍՊԸ -ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ ԱՆ «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ -ի կողմից «ՄՕՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/7-ԳԵՆԵՐԱՏՈՐ » ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 1 չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«Սպեցմաշ» ՍՊԸ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

«Սպեցմաշ» ՍՊԸ -ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 06947049:
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ specmashllc@mail.ru:
- գործունեության հասցեն է՝ Հայաստան, 0041, ք. Երևան, Արցախի պողոտա 28/15
- հեռախոսահամարն է՝ 010 43 44 77

Սույնով «Սպեցմաշ» ՍՊԸ -ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) բավարարում է «ՄՕՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/7-ԳԵՆԵՐԱՏՈՐ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում.

2) «ՄՕՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/7-ԳԵՆԵՐԱՏՈՐ» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ «Սպեցմաշ» ՍՊԸ -ին փոխկապակցված անձանց և (կամ) «Սպեցմաշ» ՍՊԸ -ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «Սպեցմաշ» ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:
- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ: